ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- 2023 թվականի № -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №519-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշում է.

1. Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի պայմանագրերի օրինակելի ձևերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 31-ի №218-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» №519-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում)՝

1) №1 հավելվածի՝

ա. 3-րդ կետում «24 ամսվա» բառերը փոխարինել «10 օրվա» բառերով,

բ. 27-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությունից հանել «, կամ սույն պայմանագրով, օրենքներով, ԷՄԱ կանոններով և ԷԲՑ կանոններով սահմանված այլ» բառերը, իսկ «՝ այդ մասին Սպառողին նախապես տեղեկացնելու պայմանով» բառերը փոխարինել «, ընդ որում պայմանագիրը համարվում է լուծված համապատասխանաբար կանխավճարի վճարման ժամկետի ավարտի կամ այն հետ պահանջելու օրվան հաջորդող օրը» բառերով.

2) №3 հավելվածի՝

ա. 3-րդ կետում «24 ամսվա» բառերը փոխարինել «10 օրվա» բառերով,

բ. 16-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) Բաշխողի կողմից միակողմանի՝

ա. Կառուցապատողի կողմից Միացման վճարը սույն պայմանագրի 3-րդ կետի համաձայն չվճարելու կամ սույն պայմանագրի 9-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն այն հետ պահանջելու դեպքերում, ընդ որում պայմանագիրը համարվում է լուծված համապատասխանաբար Միացման վճարի վճարման ժամկետի ավարտի կամ այն հետ պահանջելու օրվան հաջորդող օրը,

բ. օրենքներով, առևտրային և ցանցային կանոններով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում՝ այդ մասին Կառուցապատողին նախապես տեղեկացնելու պայմանով:»:

2. Հանձնարարել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունների մասին Որոշման №1 և №3 հավելվածներով սահմանված օրինակելի ձևերին համապատասխան կնքված պայմանագրերի կողմ հանդիսացող այն սպառողների և դիմող անձանց պատշաճ ծանուցումը (Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №523-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնների իմաստով), ովքեր սույն որոշման ուժի մեջ մտնելու պահին ամբողջությամբ չեն վճարել միացման համար անհրաժեշտ կանխավճարը կամ միացման վճարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն որոշման 1-ին կետը որոշման 2-րդ կետում նշված սպառողների և դիմող անձանց համար ուժի մեջ է մտնում և սույն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի «ա» պարբերությամբ փոփոխվող ժամկետի հաշվարկի սկիզբը հաշվարկվում է վերջիններիս՝ սույն որոշման 2-րդ կետում նշված պատշաճ ծանուցմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- 2023 թ.